


ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ 1885 - 1969



Կոստան Զարյանը (Կոնստանտին Եղիազարյանը) ծնվել է 1885 թ. փետրվարի 8-ին Շամախի քաղաքում: Հայրը եղել է ցարական բանակի գեներալ, Սուրբ Գևորգի (Գիորգիլյան) խաչի երեք աստիճանի ասպետ: Մայրը եղել է կիրթ և զարգացած անձնավորություն: Դեռ չէր լրացել տղայի 6 տարին, երբ մահանում է հայրը:

Շուտով ընտանիքը տեղափոխվում է Բաքու, որտեղ Կոստանն ընդունվում է ռուսական գիմնազիա: Սակայն երկար չի սովորում այնտեղ. ազգականների որոշմամբ մեկնում է Ֆրանսիա: Փարիզում երաժշտությամբ զբաղվող եղբոր աջակցությամբ տղան Անիեր քաղաքի գիշերօթիկ դպրոցից տեղափոխվում է Փարիզ ու ընդունվում լիցեյ: Լիցեյն ավարտելուց հետո Զարյանը 1901թ. վերադառնում է Կովկաս, որտեղ ծավալվող ազգամիջյան կոտորածները ծանր տպավորություն են թողնում նրա վրա: Կովկասում Զարյանը տարվել է հեղափոխական գաղափարներով, ինչը չի խանգարել, որ իր ազգական Հովհաննես Աբեյանի թատերախմբի կազմում որպես դերասան մասնակցի հյուրախաղերին: Կոստան Զարյանը վերջին անգամ բեմ է բարձրացել 1905 թվականի մայիսին: Դրանից հետո կրկին մեկնել է արտասահման, այս անգամ՝ Բելգիա և ընդունվել Բրյուսելի «Ունիվերսիտե լիբրե» համալսարանը: Զարյանը Բելգիայում ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Միևնույն ժամանակ նա շարունակում է հեղափոխական գործունեությունը, որի պատճառով բանտ է նստում: Բանտից դուրս գալուց հետո մեկնում է Շվեյցարիա: Ժնևում Կոնստանտինը գրական փորձեր է անում ու անգամ տպագրվում ռուսալեզու ամսագրում: Որոշ ժամանակ անց վերադառնում է Փարիզ, այնտեղից էլ՝ Բրյուսել: Բրյուսելում նա շարունակում է գրական փորձերը՝ ստեղծագործելով ֆրանսերեն:

Նրա գրական գործունեության համար շատ նպաստավոր եղան բելգիական գրական նշանավոր գործիչների միջավայրում լինելը, տեղի ամսագրերին ու պարբերականներին աշխատակցելը և հատկապես հռչակավոր բանաստեղծ Էմիլ Վերհարնի հետ ծանոթանալը, որը բարձր է գնահատել Զարյանի բանաստեղծությունները: Հենց նա էլ Զարյանի մեջ ականա արթնացնում է ազգային ինքնագիտակցության զգացումն ու մայրենիով գրելու մղումը՝ գրույցներից մեկի ժամանակ ասելով, որ գրողը պետք է ստեղծագործի այն լեզվով, որով աղոթում է: Վճռված էր. Զարյանն այսուհետև գրելու էր իր աղոթքի լեզվով՝ հայերեն, այն լեզվով, որը ոչ միայն հայ մարդու, այլև Աստվածների լեզուն է, ինչպես ասել է 19-րդ դարի անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնը: Վերջինս սովորել է հայոց լեզուն, որպեսզի հասկանա՝ «*ինչ լեզվով են խոսում աստվածները, քանզի հայոց լեզուն աստվածների լեզուն է...*»: Հայերենը կկատարելագործելու նպատակով Զարյանը մեկնում է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ, իսկ 1912 թ.՝ Պոլիս, որտեղ համագործակցում է հայ գրողների հետ և որոշ ժամանակ անց հրատարակում «Մեհյան» հանդեսը՝ նպատակ ունենալով ստեղծել հայաշունչ գրականություն, որը հեռու էր մնալու քաղաքականությունից: Առաջին համաշխարհային պատերազմը իր սև գործն անում է. «Մեհյան» հանդեսն այլևս չի տպագրվում, իսկ Զարյանն ընտանիքով ստիպված տեղափոխվում է Իտալիա: Սկսվում է Զարյանի կյանքի իտալական շրջանը: Հռոմում նա փորձում է հայանպաստ գործունեություն ծավալել, դառնում է մի ընկերության անդամ, որը զբաղվում էր ճնշված ժողովուրդների ազատագրության հարցերով: Այտեղ նա նաև ծանոթանում է մշակութային նշանավոր գործիչների հետ, այնուհետև դառնում Իտալիայում լույս տեսնող 3 կարևոր պարբերականների ներկայացուցիչը:

1919 թ. մեկնում է Կովկաս, լինում Հայաստանում ու Վրաստանում: Շրջագայության ընթացքում ստացած տպավորությունները հետագայում ծնունդ են տալիս «*Նավը լեռան վրա*» վեպին: Զարյանն ընտանիքի հետ 1922 թ. գալիս է Խորհրդային Հայաստան, փորձում գրական ու դասախոսական աշխատանք ծավալել, սակայն շատ շուտով ստիպված է լինում լքել Հայաստանը՝ չդիմանալով խորհրդային կարգերի «բարոյական» չափանիշներին: Վերջին 40 տարիների ընթացքում նա լինում է աշխարհի բազմաթիվ երկներում, վայելում համաշխարհային մեծության այնպիսի գրողների ընկերակցությունը, ինչպիսիք են Ստեֆան Յվայգը, Թեոդոր Դրայզերը, Գարսիա Լորկան և շատ ուրիշներ: Զարյանը հայրենիք է վերադառնում 1962 թ. ու հասցնում ապրել ընդամենը 7 տարի. 1969 թ. դեկտեմբերի 13-ին մեծ գրողի ու մտավորականի սիրտը դադարում է բաբախելուց:

Չարյանը թողել է և՛ արձակ, և՛ չափաճո գործեր՝ գրված ու լույս տեսած տարբեր լեզուներով՝ ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, հայերեն: Հայերեն առաջին գրվածքը՝ «Նամակ առ պարուհին», լույս է տեսել Կ.Պոլսում 1910 թ., իսկ առաջին գիրքը՝ բանաստեղծությունների «Օրերի պսակը» ժողովածուն՝ 1922թ. կրկին Պոլսում: Հայտնի են նրա «Երեք երգ ասելու համար վիշտը երկրի և վիշտը երկնքի» խորհրդապաշտական պոեմը՝ լույս տեսած անգլերեն, գերմաներեն, իտալերեն (ի դեպ, իտալացի հայտնի երգահան Օտտորինո Ռեսպիգին պոեմի հիման վրա ստեղծել է «Գարուն» օրատորիան), «Տափրագոմի հարսը» պոեմը, «Գիրք դյուցազներգությանց» ժողովածուն, «Անցորդը և իր ճամփան» հուշագրությունը, «Բանկոռպը և մամոնտի ոսկորները» վեպը և այլ գործեր: Սակայն Կոստան Չարյանը ընթերցողների լայն շրջանակին հայտնի է իր «Նավը լեռան վրա» վեպով, որը լույս է տեսել Բոստոնում 1943թ., իսկ Երևանում՝ ուղիղ 20 տար անց՝ 1963թ.:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. Համացանցից գտիր և դիտիր «Մեր մեծերը: Կոստան Չարյան» փաստագրական ֆիլմը:
2. Դիտիր նաև գրողի 125-ամյակին նվիրված «Հայ գրականության մենակը: Կոստան Չարյան» փաստագրական ֆիլմը:
3. Ներկայացրո՛ւ գրողի ապրած ժամանակաշրջանը, ցույց տուր ժամանակաշրջանի և պատմական իրադարձությունների ազդեցությունը գրողի հոգեվիճակի և աշխարհայացքի ձևավորման վրա:
4. Զեկուցո՛ւմ պատրաստիր Կոստան Չարյանի կյանքի և հասարակական գործունեության մասին: Ներկայացրո՛ւ գրողի՝ Հայաստանից և հայկական իրականությունից հիասթափվելու պատճառները:

«ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԸ

ԱՌԱՋԱԴԻԱՆՔՆԵՐ ԴԻՊԱՇԱՐԻ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. Կարդա՛ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը:
2. Ներկայացրո՛ւ արտասահմանյան և հայաստանյան երկու տպագրություններում վեպի գաղափարական ուղղվածության տարբերությունների պատճառը:
3. Վերարտադրի՛ր վեպի բովանդակությունը: Ներկայացրո՛ւ դիպաշարը:
4. Վեպից դո՛ւրս գրիր դիպաշարի բաղադրիչները սկզբնավորող տողերը:


Լուծում

Գագաթնակետ

Գործող. զարգացում

Հանգույց


Նախադրություն



5. Բացատրի՛ր, թե ինչու վեպը չի համարվում պատմական, եթե գործողությունները տեղի են ունենում 1918-1921թթ. Հայաստանում:
6. Պատմության ուսուցչի հետ խորհրդակցելով՝ տեղեկություններ հավաքիր հայ ժողովրդի համար ամենաբարդ շրջանի՝ 1918-1920 թվականների իրադարձությունների, Հայաստանում տիրող իրավիճակի մասին:
7. Կազմի՛ր այդ տարիների կարևորագույն իրադարձությունների ժամանակագրական սանդղակ:
8. Բացատրի՛ր վեպի վերնագիրը: Ի՞նչ են խորհրդանշում նա՛մն ու լեռը:
9. Կարծիք հայտնի՛ր, թե ինչ է խորհրդանշում նավը լեռան վրա բարձրացնելը: Կարծիքդ հիմնավորի՛ր:
10. «Նավը լեռան վրա» արտահայտությունն ուրիշ ի՞նչ խորհրդանիշ ունի: Լեռ բարձրացող նավը ի՞նչ ավանդություն է հիշեցնում:
11. Փորձի՛ր նկարել նավ լեռան վրա: Ի՞նչ գույներ կընտրես նկարիդ համար: Հիմնավորի՛ր ընտրությունդ:
12. Բացատրի՛ր, թե գրողն ինչու է իր գիրքը համարում «հոգիների պատմություն»:
Մեկնաբանի՛ր վեպի գաղափարը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԵՊԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

1. Ներկայացրու վեպի հերոսներին, վերլուծիր նրանց հոգեբանական առանձնահատկությունները:
2. Հակադիր պետականության կերտման և անկախության գաղափարով տոգորված և արկածախնդիր հերոսներին:
3. Բացատրիր գլխավոր հերոսի՝ Արա Հերյանի անվան ընտրության խորհուրդը հեղինակի կողմից:
4. Նշիր, թե ինչ խանգարող հանգամանքների է դեմ առնում վեպի գլխավոր հերոս Հերյանը իր երազանքի իրականացման ճանապարհին:
5. Քարտեզագրիր նավի տեղափոխման երթուղին:
6. Հեղինակը ղում է համարում «անցորդ»: Հակադիր Հերյանին և «անցորդ» հերոսներին: Վեպում ղվ է նմանատիպ հերոսը:
7. Ո՞րն է նրանց գլխավոր տարբերությունը:
8. Ինչո՞ւ է ծովերի սիրահար Արա Հերյանը հաստատակամորեն մնում լեռների երկիր Հայաստանում, երբ բոլշևիկների գալուց հետո շատերը փախչում են: Ասելիքը հիմնավորիր վեպից բերված օրինակով:
9. Կարծիք հայտնիր, թե արդյոք սիրված է Հերյանը ժողովրդի կողմից: Կարծիքը հիմնավորիր համապատասխան օրինակներով:
10. Բնութագրիր Հերյանին:



11. Ներկայացրու վեպի մյուս դրական հերոսներին ու նրանց ճակատագիրը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԵՊԻ ԼԵՉՎԱՈՃԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

1. Ուսումնասիրիր վեպի լեզվաոճական առանձնահատկությունները, ներկայացրու խոսքի պատկերավորման միջոցների գործածության մի քանի օրինակ:
2. Դուրս գրիր վեպում առկա 5-6 համեմատություն:
3. Գրիր շարադրություն՝ «Հսկայական խարույկի նմանվող Սևանը»՝ օգտվելով հեղինակային բառամթերքի հնարավորություններից: